ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ <<Արմաշ համայնքի մանկապարտեզ >> ՀՈԱԿ-ում հետևյալ թափուր աշխատատեղերը համալրելու համար:

Մեթոդիստ՝ 0,5 դրույքով, դաստիարակներ՝ որոնցից երկուսը 1,12 դրույքով, երկուսը՝ 0,56 դրույքով, երաժշտության դաստիարակ 0,75 դրույքով հաստիքներ :

Մեթոդիստի, դաստիարակների և երաժշտության դաստիարակի համար նախատեսված վարձատրությունն որոշվում է ըստ ավագանու որոշմամբ հաստատված հաստիքացուցակով: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցաշարի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ 25.03.2022թ N 471-Ա/2 ՀՐԱՄԱՆԻ մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցությին մասնակցելու համար ներկայացնել՝

1. Դիմում /Ձև1/,
2. Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ /դիպլոմ/,
3. Անձը հաստատող փաստաթուղթ ,
4. Աշխատանքայի ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/,
5. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքցիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,
9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումն հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 07.04.22թ-ից մինչև 04.05.2022թ ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00 – 17:00 –ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա մայիսի 12-ին՝ ժամը 13:00-ին , <<Արմաշ համայնքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում:

Հասցե Արարատ համայնք, Արմաշ գյուղ, Հանրապետության 1:

Տեղեկությունների համար զանգահարել 077-125-416, 093 -977-538 հեռախոսահամարներով:

Էլ.հասցե armashmankapartez@mail.ru